

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (18-րդ տարի)

Այս թիւով.....	
Ապրիլ ամսուան տօնացոյց	Էջ 2
Զատիկ՝ Սբ. Յարութիւն	Էջ 3
Նոր Կիրակի - Կրկնագատիկ	Էջ 4-5
Տէր Աստուած	Էջ 5
Շարական Նոր Կիրակիին	Էջ 6
Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի	Էջ 7
Յինանց օրեր	Էջ 7
Կարմիր Կիրակի	Էջ 8
Սրբուհի Աստուածածնի ատուումը	Էջ 9
Սուրբ Խաչի Երեւման Տօն	Էջ 10-11
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 12-15
Ինչպէ՞ս ոգեկոչել Մեծ Եղեռնի նահատակներուն անմահ յիշատակը	Էջ 16

Ապրիլ 2018 (ԻԵ տարի թիւ 8)



Յ... Յարութիւն

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց Օրհնեալ Է Յարութիւնն Քրիստոսի

Ապրիլ ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 1	ՄՈՒՐԲ ՁՍՏԻԿ՝ Յիշատակ Քրիստոսի Յարութեան
Բշ. 2	Յիշատակ Մեռելոց
Շքթ. 7	Յիշատակ Գլխատման Ս. Յովհաննէս Մկրտչին
Շքթ. 7	Աւետում Սուրբ Աստուածածնի
Կիր. 8	Նոր Կիրակի (Կրկնագատիկ)
Կիր. 15	Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի)
Կիր. 22	Կարմիր Կիրակի
Գշ. 24	Յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակներուն:
Կիր. 29	Տօն Երեւման Սուրբ Խաչին



Աւետարան, 1038 թ. Հրեշտակի յայտնութիւնը իւղաբեր կանանց

«Ինչո՞ւ ողզը մեռելներուն մէջ կը փնտրուէ՞:
 Ինչ է՞ ան. յարութի՛նն առաւ:»
 Դուկաս 24.5-6

Զարիկ Ա. Զարութիւն Յիսուսի Յարութիւնը

Շաբաթ օրը երբ անցաւ,
Մարիամ Մագդաղենացին, Զակորոսի
մայրը՝ Մարիամը, եւ Սողոմէն գացին
խունկեր գնեցին եւ պարրասպեցին,
որպէսպի երթան եւ օծեն Զիսուսի
մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ,
արեւածագին, գերեզման եկան:

. - Պ՛վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին
դրուած խարը,- կը հարցնէին իրարու,
որովհետեւ խարը շար մեծ էր:

Սակայն երբ նայեցան, տեսան
որ խարը արդէն իսկ գլորուած էր:
Գերեզմանէն ներս մտան եւ եերմակ
վզեստ հագած երիտասարդ մը
տեսան, որ ազ կողմը նստած էր, եւ
սարսափեցան: Երիտասարդը ըսաւ
անոնց.

- Մի՛ վախնա՛ք, գիտե՛մ որ խաչուած Նազովրեցի Զիսուսը կը փնտրուէ՛ք, բայց
հոս չէ՛, յարութիւն առաւ: Սեւե՛ք, վին՛ք հոս դրած էին: Այժմ գացէ՛ք, ըսէ՛ք իր
աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա ին՛ք ջեզմէ՛ առագ կ'երթայ Գալիլեա, հոն
պիտի տեսնէ՛ք վին՛ք, ինչպէս ըսած էր ջեզի:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, վարհուրած ու ապշահար, եւ
ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:



Քրիստոս Զարեաւ ի Մեռելոց

Օրհնեալ է Զարութիւնն Քրիստոսի

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ

ԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ

Արեւելեան Եկեղեցիներ Չատկին յաջորդող Կիրակիին կու տան ՆՈՐ մակդիրը, այն բացայայտ պատճառով, որ Չատկիը ըլլալով գերազանց Կիրակին, անոր յաջորդողը կ'ըլլայ սկիզբը տարւոյն բոլոր Կիրակիներուն: Հայաստանեայց Եկեղեցին, սակայն, ունի ուրիշ անուանակոչում մը այս Կիրակիին համար – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ – ինչ որ կը նշանակէ թէ այս Կիրակիին կը կրկնուին Չատկական ուրախութիւնները, ինչպէս նաեւ Չատկին տիրող հոգեւոր ու ընկերային մթնոլորտը:

Ըստ այս Կիրակիի շարականներու մեկնաբանութեան Նոր Կիրակին իր մէջ կը բովանդակէ մարդկային կեանքի վերանորոգութեան խորհուրդը: Բնութեան գեղեցկագոյն երեւոյթներէն է վերանորոգութիւնը: Ծառերն ու ծաղիկները անձրեւով ու արեւով յագենալէ յետոյ կ'արթնան, կը վերակենդանան: Արտաքին ազդակներ անհրաժեշտ են նաեւ մեր ներքին կեանքի վերանորոգութեան համար: Մեր գաղափարները, մեր համոզումները, մեր սէրը, մեր հաւատքը եւ այն ամէնը, որոնք չեն երեւիր եւ որոնք սակայն կը կազմեն մեր ներքին կեանքը, ներքին մարդը, կը կարօտին նոր ներարկումի, նոր աւիշի, նոր արեւի եւ անձրեւի:

Յիսուս է մարդկային բանական կեանքի գերագոյն վերանորոգիչը: Ան վերանորոգեց Հին Ուխտը, որ մաշած էր այլեւս եւ իր նպատակին չէր ծառայէր, այլ՝ Աստուծոյ նոր նպատակին անբաւարար էր: Յիսուս պէտք տեսաւ ՆՈՐ ՈՒԽՏ մը հաստատել նոր քարոզութեամբ եւ զայն կնքեց իր արիւնով: Նորոգեց հին պատուիրանները. նոր «գինին» նոր «տիկերու» մէջ լեցուց: Ամէն մարդ որ կը լսէր իր քարոզութիւնը կամ ականատես կ'ըլլար իր հօր գործերուն զարմացած կամ զայրացած կ'ըսէր. «Այս ի նչ նոր ուսուցում է» (Մր. 1.27): Յիսուս «նոր պատուիրան» տուաւ համայն մարդկութեան – սիրոյ պատուիրանը:

Առաքեալները, որոնք հոգեւին նորոգուած էին Քրիստոսի քարոզութեամբ, յարութեամբ ու մանաւանդ Սուրբ Հոգիի ներգործութեամբ, նոյն վերանորոգութիւնը կը թելադրեն բոլորին: Պօղոս Առաքեալ, որ արդարեւ Յիսուսի ուղղակի եւ անմիջական ազդեցութեամբ հոգեպէս եւ հիմնովին վերակենդանացաւ, իր նամակներուն մէջ հօր շեշտ կը դնէ այս լարին վրայ: «Չարութեան հին խմորը դուրս նետեցէք ձեզմէ, որպէսզի ամբողջութեամբ նոր եւ անխմոր զանգուած մը ըլլաք:» (Ա. Կր. 5.7): Կը պնդէ «Նոր մարդ, նոր արարած» ըլլալու անհրաժեշտութիւնը: «Ոչ թլփատուած ըլլալը եւ ոչ ալ անթլփատ փաւր բարոյական մարզի մէջ արժէք մը կրնան ներկայացնել. էականը «նոր արարած» ըլլալն է (Գղ. 6.15): «Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով...» (Եփ. 4. 22-23): «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը եւ նոր մարդ եղէ՛ք ձեր Արարչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ» (Կղ. 3. 10): «Ուստի չենք թուլնար բնաւ: Նոյնիսկ եթէ մարմնապէս հետզհետէ կը քայքայուինք, բայց ներքնապէս կը նորոգուինք օրէ օր»: (Բ. Կր. 4.16):

Ու Նոր Կտակարանը իր վախճանին կը բերուի երբ Յայտնութեան Գրքի Տեսանողը կ'ըսէ. «Ապա տեսայ նոր երկինք եւ նոր երկիր մը, որովհետեւ նախկին երկինքն ու նախկին երկիրը անյայտացան... Ան որ գահին վրայ նստած էր, ըսաւ. ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնեմ» (Յյտ. 21. 1,5):

Քրիստոնեական հիմնական այս գաղափարին յատկացուած է Նոր Կիրակին: Եւ օրուան շարականը, որ Ներսէս Լամբրոնացիի քերթողական բարձր ոճով գրչին արգասիքն է, կը յայտարարէ մարդկային ազգի նորոգութիւնը մեղքի եւ մահուան հնութենէ եւ կը հռչակէ այս Կիրակին իբրեւ Նաւակատիքը, այսինքն սկիզբը մեր փրկութեան:

Շարականին սկիզբը յիշուած «Նորոգեալ Կղզիք»ը քրիստոնեայ դարձած ազգերն են. նոյն նշանակութիւնը ունի յաջորդ տողի «Եկեղեցիք հեթանոսաց» բացատրութեան հետ: Շարականի երկրորդ տունով Սրբազան Բանաստեղծը խօսքը կ'ուղղէ «Հարսին», այսինքն Եկեղեցիին, ըսելով. «Ներսէն զարդարուէ ոսկեճամուկ զգեստներով պճնուած». այսինքն առաքիլութիւններով եւ սրբութեամբ նորոգուէ: Երրորդ տունի «Միոնի Որդիները» եկեղեցիի զաւակներն են: Շարականի այս համարով կը թելադրուի անոնց. «Ուրախացէք ի Քրիստոս թագաւորն» եւ ձեր հոգիներուն հնութենէն նորոգուած ըլլալու առիթով Նաւակատիք տօնեցէք եւ օրհնեցէք հրեշտակներու հետ «փառաց թագաւոր» Քրիստոսը:

Երանի անոնց, որոնց մէջ չէ մեռած եռանդը, հաւատքը եւ տրամադրութիւնը վերանորոգուելու: Անոնք պիտի նմանին հօգր արծիւին, որ ամէն տարի կը փոխէ իր փետուրները եւ խորհրդանշանը կը հանդիսանայ երկարակեցութեան եւ անսպառ ոյժի: Անոնք պիտի նմանին խնձորենիին որ ամէն տարի նոր ծաղիկներով եւ նոր տերեւներով կը պատմուճանուի, եւ ամէն տարի նոր պտուղներով կը բեռնաւորուի:

Տեր Աստուած



Աչքերովս տուած պարգեւներդ տեսնեմ:



Լեզուովս Քեզ փառաբանեմ եւ գոհութիւն յայտնեմ:



Ոտքերովս Քեզի հետեւիմ:



Ականջներովս Քու խօսքերդ լսեմ:



Ձեռքերովս Քեզի ծառայեմ:

Սիրեմ տկարին, Օգնեմ կարօտեալին,
Քրիստոնեայի վայել կեանք մը ապրիմ:

Շարական Նոր Կիրակին

- Օրհնութիւն -

Նորոգեալ կրդիք առ Աստուած, եկեղեցիք հեթանոսաց,
Ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի, տուք ըզփառս Աստուծոյ.
Եւ պատմեցէք զքաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարեա ի ներքոյ ի հանդերձս յոսկեհուռս պըսակեալ.
Քանզի ահա գայ առ քեզ Քրիստոս փառաց թագաւորն:

Ը՛ախացեալ որդիք Սիոնի, ի թագաւորն Քրիստոս,
Տօնեցէք ցնծութեամբ զնաւակատիս հոգւոց մերոց նորոգեալք ի հնութենէ.
Եւ ընդ հրեշտակս օրհնեսցուք զՔրիստոս փառաց թագաւորն:

Սքանչելի է խորհուրդ տնօրէնութեան քո, Քրիստոս,
Որ իջեր է ի չօրէ, ի սէր հարսին եկեղեցւոյ զոր ընտրեցեր.
Որով փառաբանիս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյ քո հիմանցն,
Յորմէ թովմաս հրաժարէր ոչ հաւատալ զքեզ տեսողացն.
Որում ցուցեր այսօր փափաքողին զվերըս մարմնոյդ:

Սարսելով թովմայի շօշափեր զխոցուած տիգին եւ զբեւեռացն,
Եւ գոչելով վերաձայներ Տէր եւ Աստուած դաւանելով ըզյարուցեալդ.
Որով առաք զերանին որք ոչ տեսեալ հաւատացար:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Նորոգուած կղզիներ, Ազգերու եկեղեցիներ,
Լեռներու կատարներէն բարձրաձայն փառք տուէք Աստուծոյ.
Եւ պատմեցէք քաջութիւնը Յարուցեալին:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարուէ ներքնապէս ոսկեհուռ հանդերձներով պճնուած.
Քանզի կ'իջնէ քեզի Քրիստոս փառաց թագաւորն:

Ուրախացէք, Սիոնի որդիներ, Քրիստոս թագաւորով,
Տօնեցէք ցնծութեամբ նաւակատիքը մեր հոգիներուն.
Եւ օրհնեցէք հրեշտակաց հետ զՔրիստոս, փառաց թագաւորն:

Սքանչելի է, Քրիստոս, խորհուրդը տնօրէնութեանդ,
Որ իջար չօրմէ ի սէր Հարսիդ եկեղեցւոյ,
Որմէ փառք կը ստանաս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյդ հիմքերուն,
Իսկ բացական, թովմաս, չէր հաւատար տեսնողներուն.
Որուն սակայն ցոյց տուիր այսօր վերքերը մարմնոյդ:

Սարսափահար թովմաս կը շօշափեր հետքը վերքիդ եւ զամերուն,
Ու բարձրաձայն յարուցեալդ Տէր եւ Աստուած կը դաւանէր:
Որով մենք ալ երանուեցանք, զի չտեսած Քեզ հաւատացինք:

Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի

Կանաչ Կիրակի անունը կը տրուի Զատկուայ երրորդ Կիրակիին, որ Զատիկէն 14 օր ետք կը հանդիպի եւ Զատկուան հետ 35 օրուան շարժականութիւն ունի:

Աշխարհամատուռ բառը կը գործածուի իբր աշխարհաժողով, բազմութեան յատկացեալ եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան, ուր Քրիստոս իր վերջին զատկական ընթրիքը կատարեց եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, եւ ուր առաքեալները սովորութիւն ըրին հաւաքուիլ Քրիստոսի Համբարձումէն ետք: Այս տեղը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողվուէին նոր հաւատացեալները: Հայոց եկեղեցոյ յատուկ է եկեղեցոյ անունով տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրանը՝ այսինքն Վերնատան քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն նախատիպն էր եւ եկեղեցոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը Կանաչ Կիրակի ալ կը կոչուի:

Գիտէ՞ր թէ

1915-ին, Ս. Յարութեան տօնը Ապրիլ 4-ին էր, հետեւաբար Ապրիլ 24, 1915-ը Կարմիր Կիրակին նախորդող Շաբաթ օրն էր:

ՅԻՆԱՆՅ ՕՐԵՐ

Ինչպէս ունինք Զատիկէն առաջ 50 օրերու տրամութեան եւ ապաշխարանքի շրջան մը, հաւատացեալը նախապատրաստելու համար եկեղեցական մեծագոյն այս տօնին, այնպէս ալ ունինք Զատիկէն յետոյ 50 օրերու հոգեւոր ուրախութեան շրջան մը, որ շարունակութիւնը եւ երկարաձգումն է Զատիկի խորհուրդին եւ վայելքին: Յարութեան տօնին յաջորդող այս օրերը ծանօթ են տօնացոյցի մէջ ՅԻՆՈՒՆՔ կամ ՅԻՆԱՆՅ ՕՐԵՐ անունով:

«Յինունք»-ի արմատը՝ կամ եզակին պէտք է ըլլայ ԻՆՆ բառը. եւ ենթադրութիւնը այն է, որ Յինունք կը նշանակէ այն 9 յաջորդական Կիրակիները, որոնք կը սկսին Զատիկով եւ կը վերջանան Յարութեան առաջին Կիրակիով, որ կը յաջորդէ Հոգեգալուստին: Յատկանշական երեւոյթը այն է, որ Սրբոց տօներ տեղի չեն ունենար Զատիկէն մինչեւ Յարութեան առաջին Կիրակին երկարող ժամանակամիջոցի ընթացքին:

Յինունքը կը գործածուի Զատիկէն Հոգեգալուստ երկարող 50 օրերու շրջանին համար: Անոր առաջին 40 օրերը, որոնք կը յանգին Համբարձման տօնին, ամբողջութեամբ նուիրուած են Քրիստոսի յարութեան փառաբանութեան. ուրիշ խօսքով քառասնօրեայ այս շրջանին ամէն մէկ օրը Կիրակի է, որոնց ընթացքին կ'երգուին Կիրակի օրերուն յատուկ շարականները (ի բացառեալ Կարմիր Կիրակիէն):

Յինունքի եօթը Կիրակիները կը կոչուին հետեւեալ անուններով. Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ, Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Երեւման Ս. Խաչ, Հինգշաբթի օրը Համբարձում, ապա Երկրորդ Օաղկազարդ եւ Հոգեգալուստ:

Կարմիր Կիրակի

Այս տարի, Ապրիլ 22-ին Հայաստանեայց առաքելական եկեղեցին կը նշէ Չատիկի չորրորդ կիրակին՝ Կարմիր Կիրակին: Կարմիրը Քրիստոսի եկեղեցոյ և հաւատքի համար մարտիրոսացած նահատակներու արեան խորհրդանիշն է:

Կարմիր Կիրակին կը կազմէ գատկական տօնական հանդիսութիւններու շարունակութիւնը: Կը բնութագրուի ծիսական ուտեստով (կարմիր, կանաչ հաւկիթներ, եւայլն), ուխտագնացութեամբ, մատաղով:

Հաւանաբար սա եւս բնութեան հետ կապ ունեցող բան մըն է, քանի որ Կանաչ և Կարմիր Կիրակիներուն եկեղեցոյ մէջ սովորութիւն էր այդ գոյները գործածել, ըսենք՝ եկեղեցոյ վարագոյրը, քահանայի, դպիրներու ու սարկաւազներու զգեստները, Ս. Սեդանի սփռոցները, զանազան այլ իրեր:

Հետաքրքիր է, որ ժողովրդական լեզուով կանաչ-կարմիր կը նշանակէ նաեւ ծիածանի գօտի: Սահակ վարդապետ Ամատունին իր «Հայոց բառ ու բան» բառարանին մէջ կը գրէ. «Աղեղնակ, Անեղնակ, Կանաչ ու Կարմիր Աղեղն, ծիածան: Ծիածանի գօտին՝ որ ամպ ու անձրև օրերում կամարածն երևում է երկնքի երեսին: Ծիածանը, որին կոչում են կանաչ ու կարմիր՝ Աստծոյ գօտին է» (Արտակ Արք. Մանուկեան, «Հայ եկեղեցոյ տօները», էջ 154):

«Հին ժամանակներում, պսակի արարողութեան ընթացքում կանաչ-կարմիր ժապաւեններ էին կապում փեսայի և հարսի վրա, իբրև խորհրդանիշ պտղաբերության: Կանաչ-կարմիր կապել նշանակում է իրար հետ պսակուել: Կարմիր կանչել՝ հարսանիքի ժամանակ փեսայի համար դրամ հաւաքել, կարմրականչ անել՝ հիւրասիրութեան հրաւեր կատարել»,- կը շարունակէ հեղինակը:

Կարմիր գոյնը ընդհանրապէս պայքարի նշանն է, խորհրդանիշը կեանքի, կեանքի համար պայքարի ու յաղթանակի: Յաղթանակ քրիստոնէական ոգիի, բայց յատկապէս յաղթանակ քրիստոնէական ըմբռնումի: Պայքար իր տեղը, դիրքը և հաւասարակշռութիւնը պահելու համար: Պայքար՝ ունենալու համար այն անհրաժեշտ զօրութիւնն ու ոյժը, որով քրիստոնէան կը կարողանայ «զամենայն նետս մուխս չարին շիջուցանել», այսինքն՝ պայքարիլ այն ապականիչ ուժերուն դէմ, որոնք կը սպառնան մեր հոգեւոր կեանքը խաթարել, տկարացնել կամ սպաննել:

Քրիստոնէայ ըլլալու համար եռանդ և մարտական ազնիւ ոգի պէտք է ունենալ. ստիկա պայքարելու տրամադրութենէն զուրկ մարդու գործ չէ: Հարկաւոր է կենդանի ու ապրող հաւատք, բուն ներքին պայքար՝ հին կեանքի կուտակուած մոլութիւններէն ազատուելու համար:

Կարմիր Կիրակին քրիստոնէական քաջութեան յիշեցման օր է, իսկ քաջութիւնը հիմնական կէտն է քրիստոնէական առաքինութիւններու մէջ: Ուրեմս՝ Կարմիր Կիրակին յիշեցում է, որ քրիստոնէական կեանքը պայքար է վատ և տգեղ երևոյթներու դէմ:



Սրբուհի Աստուածածնի անետումը

Այսպէս կը կոչուի սբ. Մարիամ Աստուածածնին Գաբրիէլ հրեշտակի կողմէ անետիս բերելու իրադարձութիւնը: Հրեշտակը, յայտնուելով Կոյս Մարիամին, ըսաւ անոր. «Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է: Մի՛ վախնար, Մարիա՛մ, որովհետեւ Աստուծոյ շնորհքին արժանացար: Ահա պիտի յղանաս եւ զաւակ մը ծնիս, որ Յիսուս պիտի կոչես: Անիկա մեծ պիտի ըլլայ եւ Բարձեալին որդին՝ պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դաւիթի գահը, եւ անիկա Յակոբի սերունդներուն վրայ յաւիտեանս պիտի թագաւորէ: Անոր թագաւորութիւնը անվախճան պիտի ըլլայ: (Ղուկ. 1.28-33):

Մարիամ մեծ զարմանքով լսեց այս խօսքերը, որոնք անոր առջեւ կը բանային Աստուծոյ Որդիին մարդեղութեան Խորհուրդը: Անոր խոնարհ սիրտը չէր հաւատար, որ Աստուծոյ Որդին պէտք է դառնայ եւ իր որդին, որ իրմէ պէտք է ծնի աշխարհի Փրկիչը: Տարակուսելով ան հարցուց հրեշտակին. «Ատիկա ի՛նչպէս կրնայ պատահիլ երբ ամուսնացած չեմ»: Հրեշտակը պատասխանեց. «Մուրբ Հոգին քեզի պիտի գայ եւ Բարձեալին զօրութիւնը քու վրայ պիտի հանգչի. ուստի ծնելիք զաւակդ սուրբ է եւ Աստուծոյ Որդի պիտի կոչուի»: (Ղուկ. 1.34-35):

Մարիամը, մեծ հաւատքով և ամբողջովին յանձնուելով Աստուծոյ կամքին, խոնարհաբար բացագանչեց. «Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածդ ըլլայ» (Ղուկ. 1.38):

Այս խօսքերով Կոյս Մարիամը ողջ մարդկութեան անունով համաձայնութիւն տուաւ դառնալու միջոց Քրիստոսի մարդեղութեան:

Այդ պահէն սկսաւ իրականանալ հրեշտակի խօսքերը: Մուրբ Կոյսի պատասխանին և համաձայնութեան անմիջապէս հետեւեցաւ անոր Մուրբ Հոգիով յղիանալը Յիսուսով, որ սկիզբը եղաւ մեր փրկագործութեան:

Այս սքանչելի իրադարձութեան յիշատակը այժմ Հայ Եկեղեցին կը կատարէ Ապրիլի 7-ին: Ըստ աւանդութեան՝ Գաբրիէլի անետումը տեղի ունեցած է Չորեքշաբթի օրը: Այս պատճառով տարուայ բոլոր Չորեքշաբթի օրերը նուիրուած են Աստուածածնի անետման եւ Քրիստոսի մարդեղութեան:

Գիտէի՞ր թէ

Հայաստանի մէջ մայրերու տօնը Ապրիլ 7-ին կը տօնեն:

ԱՍՏՈՒԱԾԱՍՕՐ ՏՕՆԵՐ

Աստուածամօր տօներու մէջ ժամանակագրական կարգով առաջինն է Մուրբ Կոյսի յղացումը Աննայէն (Դեկտեմբերի 9), ապա՝ անոր ծնունդը (Մեպտեմբերի 8) և երեքամեայ Ընծայումը Տաճարին (Նոյեմբերի 21): Աւետումը, որ տոմարական նկատառումներով առանձնացուած է Աստուածայայտնութեան տօնախմբական շրջանին, ներկայիս Հայ Եկեղեցին կը յիշատակէ Ապրիլի 7-ին, իսկ Վերափոխումը՝ օգոստոսի 15-ի մօտ կիրակի օրը՝ իրեն յաջորդող 8 տօնական օրերու հետ կազմելով իննօրեայ տօնախմբական շրջան: Աստուածամօր նուիրուած են նաեւ անոր գօտիին եւ տուփին յայտնաբերման յիշատակները, որոնցմէ առաջինը կը տօնուի Վերափոխման իննօրեակին յաջորդող առաջին Կիրակիին, իսկ երկրորդը՝ Հոգեգալուստին յաջորդող 5-րդ կիրակի օրը:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՄԱՆ ՏՕՆ

Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր, հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան (Շարական)

Ամէն տարի՝ Ս. Զատկին

յաջորդող հինգերորդ կիրակի օրը, մեր երանաշնորհ հայրապետներու տնօրինութեան համաձայն, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի երևման տօնը՝ մէկ անգամ ևս յիշելով Տիրոջ չարչարանքները, անոր խաչելութիւնը եւ խաչի վրայ անոր թափած անմեղ արեան շնորհիւ մարդկային ցեղի փրկութիւնը: Այս տօնը պատմական դէպքի մը յիշատակութիւնն է:

351 թուի Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղեմացի հայրապետի օրով, օրուայ երրորդ ժամուն (ժամը 9-ին) երկնքի վրայ կ'երեւի Փրկիչի խաչի նշանը՝ տարածուելով Գողգոթայէն մինչև Չիթենեաց լեռը: Այս դէպքին ակնատես կ'ըլլան ոչ միայն Երուսաղեմի մէջ բնակող քրիստոնէաները, այլև տարբեր դաւանանքներու ու կրօններու պատկանող մարդիկ: Խաչի պայծառ երևումէն նոյնիսկ արեգակը կը մթագնի: Բոլորը կը շտապեն եկեղեցի, իրենց սրտի խորերէն աղօթելու առ Աստուած՝ գոհութիւն յայտնելով Բարձրեալին՝ այս մեծ շնորհին արժանացած ըլլալու համար: Երկնային հրաշքի շնորհիւ շատեր կը հաւատան Յիսուսին, կը մկրտուին սուրբ Կիւրեղի ձեռքով՝ անդամագրուելով Քրիստոսի Եկեղեցոյ: Այս դէպքին առթիւ Կիւրեղ հայրապետ նամակ մը կը գրէ Բիւզանդիայի Կոստանդին կայսրին, որ Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակին մէջ սուրբը կը պատմէ Երուսաղեմի խաչի երևման մասին՝ յորդորելով, որ վերջինս հաստատ ժայ իր քրիստոնէական ճշմարիտ հաւատքի մէջ, ինչպէս նաև հաւատարիմ՝ նիկիական դաւանութեան: Այս թուղթը Ե. դարուն կը թարգմանուի հայերէնի և կ'ընթերցուի տօնի օրուայ առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ կատարուող անդաստանէն առաջ:

Մեր բազմադարեան պատմութեան մէջ ալ քիչ չեն խաչի երևումները: Երանելի Կորիւնը, ինչպէս նաև քերթողահայր Սովսէս Խորենացին, Հայ Եկեղեցոյ երրամեծ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահուան և թաղման կապակցութեամբ արձանագրած են, որ Վաղարշապատ քաղաքին մէջ օրեր շարունակ խաչի լուսապայծառ նշանը փայլեր է այն տան վրայ, ուր սուրբն աւանդեր էր իր հոգին: Այդ նոյն նշանն ալ առաջնորդ է եղեր բազմութեան ամբողջ յուղարկաւորութեան ընթացքին: Եւ այսքան տարիներ յետոյ, շատերու մօտ հարց կրնայ ծագիլ թէ ի՞նչ է խաչը քրիստոնէաներու համար, և ի՞նչ է անոր նշանակութիւնը:

Խաչը Հռոմէական կայսրութեան ժամանակ մահապարտները անարգելու և նախատելու համար էր: Խաչելութիւնը ոչ միայն անպատուաբեր վախճան կը համարուէր, այլև հին աշխարհի յայտնագործած ամենաանմարդկային և դաժան պատիժներէն մէկն էր: Դատապարտեալը մերկ կը գամէին խաչին՝ ենթարկելով զանազան մարմնական խոշտանգումներու: Եւ խաչեալը կը տանջուէր, արևի կիզիչ ճառագայթները կ'այրէին՝ անոր գլուխը, անբնական վիճակէն մարմինը կ'ուռճանար, վերքերը կը բորբոքէին՝ անտանելի ցաւեր պատճառելով: Մահապարտը, երկար տանջուելէ յետոյ, կ'աւանդեր հոգին: Այդ ժամանակ տախտակներէ շինուած այդ գործիքը մահուան խորհրդանիշն էր: Հին Կտակարանին մէջ կը կարդանք. «Անիծեալ է ան, որ փայտէ կը կախուի» (Բ Օր. ԻԱ 23), բայց մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոս խաչի վրայ հեղած իր թանկագին արեամբ կենաց և օրհնութեան միջոցի վերածեց զայն «այդ անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով» (Գղ. Գ 13): Աստուածորդին միացաւ խաչափայտին սրբագործելով զայն և մեզ տալով «զէնն յաղթութեան» ընդդէմ սատանայի ու անոր խաբկանքներուն: Եթէ մինչև Քրիստոս

խաչն անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելութեամբ անոր մէջ դրուեցաւ կեանքի խորհուրդը, և մարդ արարածը հնարաւորութիւն ստացաւ նոր արարած ըլլալու. «Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս» (Բ Կր. Ե 17): Քրիստոս խաչի վրայ ներեց մեզի, մեր մեղքերու պարտամտութիւնը վերցուց մէջտեղէն՝ գամելով զայն խաչափայտին:

Մարդկութեան փրկութեան համար մարմնացած Աստուած խաչուեցաւ, թաղուեցաւ, բայց երրորդ օրը հրաշափառապէս յարութիւն առաւ մեռելներէն՝ քանդելով մահուան կապանքները: Այո՛, յարութիւն առաւ Տէրը, որովհետեւ Լոյսը չէր կրնար գերեզմանի մթութեան մէջ մնալ: Եւ այս իրողութիւնը նկատի ունենալով է որ սուրբ Կիրեղ Երուսաղէմացին կ'ըսէ. «Կը դաւանիմ Խաչը, քանզի գիտեմ Յարութիւնը»:

Հետևաբար խաչը մեզ համար յոյսի, սիրոյ, յաղթանակի և փրկութեան նշանն է, որուն վրայ Աստուածորդին պարտութեան մատնեց սատանային՝ մեր առջեւ բանալով դրախտի դուռը, որ մինչ այդ փակուած էր մեր նախածնողներ Ադամի ու Եւայի անհնազանդութեան պատճառով: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրն ու անբաւ ողորմածութիւնը աղամորդիներուս նկատմամբ: Տէրն իր փրկագործութեան խորհուրդով խաչը վերածեց յաղթութեան նշանի: Եւ այս գիտակցութեամբ ու խոր համոզումով է որ քրիստոնէութեան մունետիկ Պօղոս Առաքեալ ի լուր բոլորին կ'ազդարարէ. «Քաւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ» (Գղ. Զ 14): Այո՛, տէրունական նշանը ճշմարիտ քրիստոնէաներուս համար պարծանքներու պարծանքն ու Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնն է անկեալ մարդու նկատմամբ: Ճիշդ է, անհաւատ ու Տէրը չճաշակած մարդոց համար խաչի վրայ Քրիստոսի այս զոհողութիւնն անիմաստ և անհասկնալի կը թուի, բայց մեզի համար, որ մեր սրտերուն մէջ ընդունած ենք ճշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոս, խաչը դարձած է փրկութեան գրաւականը: Անգիտութեան խաւարին մէջ խարխափող այս մարդոց մասին է առաքեալի խօսքը. «Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին» (Փլպ. Գ 18-19):

Ապաւինելով խաչի զօրութեանը՝ մենք կը խափանենք շարը, խաչակնքելով, մենք մեզի Աստուծով կը զօրացնենք, եւ անով կը զարդարենք մեր հողակերտ եկեղեցիները, անով կը կնքենք մեր զաւակները, անով կը պսակուինք, անով ալ գերեզման կ'իջնենք յաւիտենական կեանքի յոյսով: Ինչպէս Տիրոջ երկրային կեանքը խաչի ճանապարհ մը եղաւ, այնպէս ալ քրիստոնէաներուս համար այս ժամանակաւոր կեանքը խաչի ճանապարհ է: Ճանապարհ մը, որ անցուկ ու դժուար է, քարքարոտ ու փշոտ, բայց որու վերջնական հանգրուանը Տիրոջ խոստացած երկնային արքայութիւնն է: Սուրբ խաչի երևման տօնէն բխող պատգամն է, որ խաչակնքումը մեզի համար ոչ թէ ձեւական ու մեքենական շարժում մըն է, այլ ամէն անգամ երբ կը խաչակնքենք պահ մը կ'անդրադառնանք այն մեծ ինքնագոհութեան, որ Աստուած իրականացուց խաչին վրայ մեր փրկութեան համար: Մեր աղօթքը կը վերառաքենք առ ամենաբարին Աստուած՝ կրկնելով սուրբ հայրերու շուրթերուն բիրեղացած սրտառույ մաղթանքը.

Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս,
յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:
Յայնժամ մեք մի՛ ամաչեցուք
յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով
մեծաւ բերկրեցուք ընդ աջմէ քումմէ
որպէս զորդիս լուսոյ և որդիս տուրնջեան:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Եմմաուսի ճամբուն վրայ
Ամբողջացո ւր ըստ Ղուկաս 24.13-17 համարներուն:

Ճանչնար, գիւղ, տասնրմէկ, պատահած, խօսակցէին,
գիշերելու, Յիսուս, երթալ, ծածկուած, հացը, կտրեց, երկուքը

Նոյն օրը աշակերտներէն ----- Եմմաուս անունով -----
մը կ'երթային, որ Երուսաղէմէն շուրջ ----- քիլոմէթր հեռու է:
Անոնք իրարու հետ կը խօսէին ----- անցուդարձերուն մասին:
Մինչ իրարու հետ կը ----- ու կը վիճէին, ----- անձամբ
մօտեցաւ անոնց եւ սկսան միասին -----: Անոնց աչքերը այնպէս
մը ----- էին, որ չէին ----- զայն: ...

Յիսուս անոնց հետ տուն մտաւ ----- համար: Երբ անոնց
հետ սեղան բազմեցաւ, առաւ -----, օրհնեց, ----- եւ անոնց
տուաւ: Անսխալապէս անոնց աչքերը բացուեցան եւ ճանչցան զինք,
բայց ինք անոնց աչքերէն անյայտացաւ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ կը կոչուի Սուրբ Յարութեան Կիրակիին յաջորդող Կիրակի օրը (երկու պատասխան):

- ա. Նոր Կիրակի
- բ. Կրկնագատիկ
- գ. Կանաչ Կիրակի
- դ. Կարմիր Կիրակի

2.- Ի՞նչ կը կոչուի Նոր Կիրակիին յաջորդող Կիրակին (երկու պատասխան):

- ա. Աշխարհամատրան
- բ. Կրկնագատիկ
- գ. Կանաչ Կիրակի
- դ. Կարմիր Կիրակի

3.- Ամբողջացո՛ւր ըստ Սաղմոս 23 (ԻԲ) 1-ին.

Տէրն է -----, ուստի ոեւէ բանի ----- պիտի չմսամ:

4.- Յիսուս իր ձերբակալութենէն առաջ ի՞նչ կ'ընէր:

- ա. կ'ուտէր
- բ. կը խմէր
- գ. կ'աշխատէր
- դ. կ'աղօթէր

5.- Այս տարի ե՞րբ էր Ծաղկազարդը. Մարտ -- ին:

6.- Ո՞վ գլորեց Յիսուսի գերեզմանը գոցած մեծ քարը:

- ա. Կիները
- բ. Աշակերտները

- գ. Աստուծոյ հրեշտակը
- դ. Պահակ զինուորները

7.- Ոտնլուան շաբթուայ ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

8.- Վերջին Ընթրիքը շաբթուայ ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա. Երկուշաբթի
- բ. Շաբաթ
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

9.- Յիսուսի խաչելութիւնը շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա. Ուրբաթ
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

10.- Կիրակի օրը Յիսուսի յարութենէն առաջ ի՞նչ կը կոչուէր:

- ա. Մէկշաբթի
- բ. Շաբաթ
- գ. Կիրակի
- դ. Արեւի օր

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ կը կոչուի Ս. Զատիկին
յաջորդող 50 օրերու շրջանը.

Յ-----

2.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր
ետք համբարձաւ:

- ա. 7
- բ. 21
- գ. 40
- դ. 50

3.- Տուր Նոր Կիրակիին հոմանիշ մը.

- ա. Կանաչ Կիրակի
- բ. Կապոյտ Կիրակի
- գ. Կարմիր Կիրակի
- դ. Կրկնազատիկ

4.- Տուր Աշխարհամատրան
Կիրակիին հոմանիշ մը:

- ա. Կանաչ Կիրակի
- բ. Կապոյտ Կիրակի
- գ. Կարմիր Կիրակի
- դ. Կրկնազատիկ

5.- Ծաղկազարդին նախորդող
Շաբաթ օրը որո՞ւ Յիշատակը
կ'ոգեկոչենք:.

----- Յարութեան

6.- Այս տարի Հայոց
Ցեղասպանութեան քանի՞ երորդ
տարեդարձն է:

7.- Ամբողջացո՞ւր.

Յորժամ գաս -----,
Յահագին -----
Յիշեա զիս, -----:

8.- Գլխատուող ո՞ր սուրբին
յիշատակը այս տարի Ապրիլ 7-ին կը
յիշատակենք.

Ս. -----:

9.- Ո՞ւր կը կարդանք. «Ես
ոչխարներս կը ճանչնամ. անոնք
ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի:

Աւետարան ըստ Յովհաննէսի --.--

10.- Յիսուս իր յարութենէն ետք
քանի՞ աշակերտներու հանդիպեցաւ
Եմմաուսի ճամբուն վրայ:

- ա. 2
- բ. 4
- գ. 8
- դ. 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ամբողջացո՛ւր Մատթէոս 28.20.
Անոնց սոքվեցուցէք այն բոլոր
----- որ եւ ձեզի տուի. եւ
ահա ----- հետ պիտի -----
մինչեւ աշխարհիս -----:

վերջին Կիրակիները:
ե. Տօն ----- Սուրբ Խաչին
զ. Կ----- Կ-----
է. Ե----- Ծ-----
ը. Հ-----
թ. Յ----- Կ-----

2.- Չատիկին, ողջոյն տուողը կ'ըսէ.
- Քրիստոս ----- ի -----
եւ ստացողը կը պատասխանէ
----- է ----- Քրիստոսի:

7.- Գրէ՛ 23-րդ (ԻԲ) Սաղմոսին
առաջին համարը:
----- , -----
----- :
----- :

3.- Կիրակիներու ո՞ր շաբթը շիտակն
է:

8.- Աշխարհաբարով գրէ՛ հետեւեալ
տողը.

- ա. Ս. Չատիկ, Նոր Կիրակի, Կանաչ, Կարմիր
- բ. Նոր Կիրակի, Կանաչ, Կարմիր, Ս. Չատիկ
- գ. Ս. Չատիկ, Նոր Կիրակի, Կարմիր, Կանաչ
- դ. Կրկնագատիկ, Ս. Չատիկ, Նոր Կիրակի, Կանաչ

Սարսելով Թովմայի շօշափեր
զխոցուած տիգին եւ զբեւեռացն,

-----:

4.- Հայ Եկեղեցին ունի սուրբերու
երկու գլխաւորութներ. յիշէ՛ զանոնք:
ա. ----- Սուրբեր
բ. ----- Սուրբեր

9.- Աշխարհաբարով գրէ՛ հետեւեալ
տողը.

Ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի,
տուք ըզփառս Աստուծոյ.

5.- Ժամերգութեան ընթացքին
ո՞ր գիրքին մէջ կը կարդանք այն
սուրբերուն մասին որոնց համար Հայ
Եկեղեցին յատուկ օր չէ նշանակած:

Յ-----ք

10.- Ո՞ւր գրուած է «Պիտի հանեմ ձեզ
ձեր գերեզմաններէն. կենդանութեան
շունչ պիտի տամ, իմ հոգիս պիտի
տամ ձեզի, եւ ձեզի ձեր երկիրը
պիտի վերադարձնեմ»:

----- 37.14


6.- Ճիշտ կարգով յիշէ՛ Յինանց 5

Դնչպէս ոգեկոչել Մեծ Եղեռնի նահապարակներուն
անմահ յիշատակը

Նոյնիսկ 24, 1915 - 2018

Ոգեկոչենք Մեծ Եղեռնի նահապարակներուն անմահ յիշատակը նաեւ՝

- . Նայելով Քայադրոշմ կեանք մը,
- . Վառ պահելով Քայաստանեայց եկեղեցւոյ փոծերն ու ազգային
աւանդութիւնները,
- . Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր Քայանուագ շարականներն ու երգերը,
- . Նմուր կառչած մնալով մեր Քայավայել բարի բարօրերուն ու
սովորութիւններուն
- . Կարդալով ու կեանքի վերածելով մեր Քայագրեալ Նստուածաշունչը եւ
մանաւանդ ՍիրՄէլՊՎ Քայը ամբողջ տարուան ընթացքին:



«Պիտի Քանեմ
ճեւ ճեր
գերեւմաններէն.
կենդանութեան
շունչ պիտի տամ,
իմ Քոգիս պիտի
տամ ճեւի, եւ ճեւի
ճեր երկիրը պիտի
վերադարձնեմ»:
Եպեկիէլ 37.14